ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Աշխեն Սողոմոնյան
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս

Իրավաբանական անձի կառավարումը իրավաբանական բազմաշերտ գործընթաց է: Եվ այս առումով հետաքրքրություն է ներկայացնում լուծարման գործընթացում գտնվող իրավաբանական անձի՝ կառավարման մարմիններին, ինչպես նաև լուծարման հանձնաժողովի իրավական կարգավիճակին ու լիազորություններին վերաբերող խնդիրների ուսումնասիրությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի[1] (այսուհետ՝ Օրենսգիրք) 68-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ իրավաբանական անձի լուծարման մասին որոշում ընդունած իրավաբանական անձի հիմնադիրները (մասնակիցները) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմինը նշանակում են լուծարման հանձնաժողով և Օրենսգրքին համապատասխան սահմանում են լուծարման կարգն ու ժամկետները: Այսինքն՝ լուծարման հանձնաժողովի հիմնական խնդիրը իրավաբանական անձի պարտատերերի պահանջները օրենքով սահմանված հերթականությամբ բավարարելն է:

Իրավաբանական գրականության մեջ միանշանակ մոտեցում չկա այն հարցի շուրջ, թե արդյոք լուծարման հանձնաժողովը համարվում է կառավարման մարմին, թե ոչ[2]: Քանի որ լուծարման հանձնաժողովը ձևավորվում է որոշակի ժամկետով և կոնկրետ նպատակով, չունի լիազորությունների լայն շրջանակ, և լուծարման հանձնաժողովի հետ շարունակում են գործել նաև իրավաբանական անձի՝ կառավարման մյուս մարմինները, օրինակ՝ ընդհանուր ժողովը, կարելի է ենթադրել, որ լուծարման հանձնաժողովը չի կարելի համարել իրավաբանական անձի կառավարման մարմին[3]: Իսկ պրոֆեսոր Վ. Դ. Ավետիսյանը հարում է տեսության մեջ արտահայտված այն կարծիքին, որ լուծարման հանձնաժողովը կորպորացիայի կառավարման մարմին է՝ դրան բնորոշ հատկանիշներով: Ավելին, նրա կարծիքով, լուծարման հանձնաժողովը լուծարման գործընթացում ընդգրկելու պարագայում նրա գործունեությունը կդառնա առավել թափանցիկ և վերահսկելի: Ի տարբերություն լուծարման կառավարչի՝ լուծարման հանձնաժողովը միշտ հանդես է գալիս լուծարվող իրավաբանական անձի անունից և ներկայացնում է իրավաբանական անձի շահերը[4]:

Հարկ է քննարկել այն խնդիրը, թե ընկերության լուծարման և լուծարման հանձնաժողով ձևավորելու մասին որոշում ընդունելուց հետո լիազորությունների ի՞նչ

---

[1] ՀՀՊՏ 1998/17(50), 10.08.98:

[2] Այսպես, օրինակ՝ Գ. Ս. Շապկինան լուծարման հանձնաժողովը դիտարկում է որպես իրավաբանական անձի կառավարման մարմին՝ իհարկե առանձնահատուկ կարգավիճակով, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ այն ձևավորվում է միայն իրավաբանական անձի լուծարման դեպքում: Տե՛ս **Шапкина Г. С.**, Новое в российском акционерном законодательстве. М., 2002, էջ 71:

[3] Տե՛ս **Ломакин Д. В.**, Очерки теории акционерного права, М., 2005, էջ 108-109:

[4] Տե՛ս **Ավետիսյան Վ. Դ.**, Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետություն, Երևան, 2013, էջ 147:

վերաբաշխում է տեղի ունենում լուծարման հանձնաժողովի և գործադիր մարմնի միջև: Օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ կետի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի[1] 27-րդ հոդվածի 3-րդ կետի[2] համաձայն՝ բաժնետերերի ընդհանուր ժողովը, բաժնետիրական ընկերության լուծարման մասին որոշում ընդունելով, միաժամանակ նշանակում է լուծարման հանձնաժողով (կառավարիչ): Ո՛չ Օրենսգրքով, ո՛չ էլ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված չէ, որ լուծարման հանձնաժողովի ստեղծումով գործադիր մարմնի լիազորությունները դադարեցվում են: Սակայն այս եզրակացությանը կարելի է հանգել Օրենսգրքի 68-րդ հոդվածի 3-րդ կետի և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի բովանդակությունից, որոնցով սահմանված է, որ լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում ընկերության գործերի կառավարման լիազորությունները, իսկ լուծարվող ընկերության անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը: Հետևաբար լուծարման հանձնաժողովի լիազորությունները չեն սահմանափակվում միայն ընկերության լուծարման հետ կապված գործառույթներ իրականացնելով, քանի որ նրան են փոխանցվում նաև ընկերության գործերի կառավարմանն ուղղված լիազորություններ, որոնց մեծ մասը մինչև լուծարման մասին որոշում կայացնելը վերապահված են լինում գործադիր մարմնին: Ուստի մենք նույնպես գտնում ենք, որ լուծարման հանձնաժողովը իրավաբանական անձի հատուկ մարմին է, որը ստեղծվում է դրա լուծարման ընթացքում, իսկ գործադիր մարմնի լիազորությունները դադարեցվում են: Լուծարման հանձնաժողովին չեն վերապահվում միայն այնպիսի որոշումներ կայացնելուն ուղղված լիազորություններ, որոնք վերապահված են ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը: Որպես ասվածի ամփոփում՝ նշենք, որ Ասիական զարգացման բանկի հատուկ զեկույցի 11-րդ կետով, որը վերաբերում է կորպորացիայի լուծարման ընթացքում կատարվող գործողություններին, նախատեսված է, որ պարտադիր պետք է նշանակվի անկախ անձ, ով կզբաղվի ընկերության լուծարման գործերով, իսկ տնօրենի լիազորությունները պետք է դադարեցվեն[3]:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ընկերության լուծարման և լուծարման հանձնաժողովի ստեղծման մասին որոշումը նույն հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված դեպքում (երբ ընկերությունը լուծարվում է ժողովի որոշմամբ) կայացնում է ժողովը՝ դրան մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների ¾-ով, սակայն ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից, եթե ընկերության կանոնադրությամբ ձայների առավել մեծ քանակ սահմանված չէ: Իսկ նույն կետի 2-րդ մասով սահմանված է, որ լուծարման հանձնաժողովի ստեղծ-

[1] ՀՀՊՏ 2001/34 (166), 06.11.01:

[2] Սույն ուսումնասիրության շրջանակներում Օրենսգրքին զուգահեռ ուսումնասիրվել են լուծարման հարաբերությունները կարգավորող «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքում առկա իրավակարգավորումները, քանի որ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքը նշված հարաբերությունների մանրակրկիտ կարգավորում չի նախատեսում, իսկ գործունեության առանձին ոլորտներում ընդգրկված ընկերությունների լուծարման առանձնահատկությունները սույն ուսումնասիրության շրջանակներում չեն ընդգրկվում:

[3] Տե՛ս Unites Nations Commission on International Trade Law Yearbook, United Nations Publications, 2002, էջ 541:

ման պահի դրությամբ ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի առնվազն տասը տոկոսի սեփականատեր հանդիսացող բաժնետերերն իրավունք ունեն ընդգրկվել լուծարման հանձնաժողովի կազմում կամ նշանակել իրենց լիազոր ներկայացուցչին[1]: Խոսելով լուծարման հանձնաժողովի կազմի մասին՝ պետք է նշել, որ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի կարգավորմամբ պաշտպանվում են բացառապես բաժնետերերի և այն էլ գործնականում միայն մեծամասնություն կազմող բաժնետերերի շահերը: Այնինչ մեր կարծիքով այս գործընթացում անհրաժեշտ է նախատեսել նաև փոքրամասնություն կազմող բաժնետերերի ու ընկերության պարտատերերի շահերի պաշտպանության գործուն մեխանիզմներ: Օրինակ՝ Անգլիայի Միացյալ Թագավորության օրենսդրությամբ լուծարման գործընթացի որոշակի փուլում, մասնավորապես երբ մինչ ընկերության մասնակիցների կողմից լուծարման վերաբերյալ որոշում կայացնելիս պարզվում է, որ հնարավոր չէ լրիվ ապահովել պարտատերերի պահանջների բավարարումը, ընկերության պարտատերերին հնարավորություն է տրվում որոշում կայացնել ընկերության կամավոր լուծարման մասին (creditors' voluntary winding up), եթե չկան ընկերությունը հարկադիր կարգով սնանկ ճանաչելու պայմաններ[2]: Գերմանիայի «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 265-րդ պարագրաֆում, որը վերաբերում է լուծարման հանձնաժողովին, սահմանվում է, որ ընկերության տնօրենների խորհրդի անդամները կազմակերպում են ընկերության լուծարումը՝ որպես լուծարման հանձնաժողովի անդամներ: Սակայն բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են նշանակվել նաև լուծարման հանձնաժողովի այլ անդամներ: Նույն պարագրաֆով նախատեսված են նաև ընկերության փոքրամասնություն կազմող բաժնետերերի իրավունքների պաշտպանության մեխանիզմեր. այսպես՝ դատարանը կարող է լուծարման հանձնաժողովի անդամներ նշանակել կամ նշանակվածներին ազատել վերահսկիչ մարմնի կամ փոքրամասնություն կազմող բաժնետերերի պահանջով: Վերջիններիս բաժինը չպետք է պակաս լինի բաժնետոմսերի ընդհանուր քանակի 1/20-րդից: Բացի այդ՝ փոքրամասնություն կազմող բաժնետերերը պետք է ապացույց ներկայացնեն դատարանին, որ հանդիսանում են այդ ընկերության բաժնետերը 3 ամիսից ոչ պակաս: Լուծարման հանձնաժողովի այն անդամները, ովքեր չեն նշանակվել դատարանի կողմից, բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից կարող են ազատվել պարտականությունների կատարումից ցանկացած պահի[3]: Ինչպես տեսնում ենք, Գերմանիայի «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքը նախատեսում է լուծարման հանձնաժողովի գործունեությունը վերահսկելու բազմաթիվ կառուցակարգեր՝ հնարավորություն տալով և՛ բաժնետերերի ընդհանուր ժողովին, և՛ փոքրամասնություն կազմող բաժնետերերին, և՛ վերստուգիչ մարմնին ցանկացած պահի վիճարկել լուծարման հանձնաժողովի այս կամ այն մասնակցի անդամությունը:

---

[1] Օրենքում նշվում է լուծարման հանձնաժողովի ձևավորման միայն մեկ դեպքի մասին, սակայն բացի ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովից՝ ընկերության լուծարման մասին որոշում կայացնելու իրավունք ունի նաև դատարանը: Հարց է առաջանում՝ ո՞վ է այս դեպքում ձևավորում լուծարման հանձնաժողովը, և ո՞վքեր են ընդգրկվում դրա կազմում:

[2] Տե՛ս Insolvency Act 1986, http://www.legislation.gov.uk/ukpga/1986/45/contents (վերջին այցելություն 28.01.2018):

[3] Տե՛ս German Stock Corporation Act (Aktiengesetz) English translation as at May 10, 2016, http://www.nortonrosefulbright.com/files/german-stock-corporation-act-147035.pdf (վերջին այցելություն 28.01.2018):

Գտնում ենք, որ Օրենսգրքով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նույնպես անհրաժեշտ է նախատեսել նման մեխանիզմներ, քանի որ ընկերության փոքրամասնություն կազմող բաժնետերերն ըստ էության դուրս են մնում լուծարման գործընթացից, որովհետև մեծամասնություն կազմող բաժնետերերը, ովքեր նաև ձևավորում են ընդհանուր ժողովի կամքը, մշտապես հնարավորություն ունեն կայացնելու իրենց ձեռնտու որոշումներ:

Բացի այդ, մեր կողմից կատարված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ, ի տարբերություն այլ երկրների օրենսդրության[1], ՀՀ քաղաքացիական օրենդրությունը չի նախատեսում լուծարային հանձնաժողովի անդամի մահվան, պարտականությունների կատարումից հրաժարվելու կամ այլ հանգամանքների բերումով պարտականությունների կատարման անհնարինության դեպքում հանձնաժողովի անդամների փոփոխման և պատասխանատվության հետ կապված հարաբերությունները:

Խոսելով լուծարման հանձնաժողովի գործունեության մասին՝ հարկ է անդրադառնալ նաև նրա անդամների պատասխանատվության խնդրին: ՀՀ գործող օրենսդրությամբ այս խնդրին համակարգային լուծում չի տրվում: «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածով լուծարման հանձնաժողովի համար նախատեսված են մի շարք պարտականություններ, որոնց հիմնական նպատակը պարտատերերի պահանջները բավարարելը և դրանից հետո մնացած գույքը ընկերության բաժնետերերի միջև բաշխելն է: Սակայն կարող է ստացվել այնպես, որ լուծարման հանձնաժողովի անգործության կամ պարտականությունները ոչ պատշաճ կատարելու պատճառով վնաս պատճառվի և՛ ընկերության պարտատերերին, և՛ բաժնետերերին: Այսպես, օրինակ՝ «Բաժնետիրական ընկերությունների» մասին ՀՀ օրենքի 28-րդ 3–րդ կետով սահմանվում է, որ լուծարման հանձնաժողովն իրականացնում է ընկերության գույքի վերագնահատումը, միջոցներ է ձեռնարկում պարտատերերի հայտնաբերման և դեբիտորական պարտքի ստացման ուղղությամբ: Իսկ ի՞նչ տեղի կունենա, եթե լուծարման հանձնաժողովը միջոցներ չձեռնարկի դեբիտորական պարքի ստացման ուղղությամբ. բնականաբար կվնասվեն ընկերության պարտատերերի ու բաժնետերերի շահերը: Լուծարման հանձնաժողովի անդամների պատասխանատվության մասին օրենսդրական նորմերի բացակությունը ստեղծում է նրանց անպատժելիության տպավորություն, նվազեցնում է նրանց կողմից իրենց պարտականությունների կատարման արդյունավետությունը, ինչը կարող է բաժնետիրական ընկերության համար բացասական հետևանքներ առաջացնել[2]: Թերևս լուծարման հանձնաժողովը որպես կառավարման մարմին դիտելը և կառավարման մարմինների պատասխանատվության մեխանիզմների տարածումը հանձնաժողովի անդամների վրա կլուծեն այդ խնդիրը:

Պետք է նկատի ունենալ, որ լուծարման հանձնաժողովը կոլեգիալ մարմին է, և նրա որոշումները ընդունվում են անդամների քվեարկությամբ: Նման կարգը բնորոշ է բաժնետիրական ընկերության մյուս կոլեգիալ մարմիններին ևս: Նկատի ունե-

---

[1] Օրինակ՝ Ֆրանսիայի Հանրապետությունում առևտրային ընկերության լուծարման գործընթացում գտնվելու ժամանակ՝ եթե լուծարային կառավարիչը հրաժարական է ներկայացնում, և դրա արդյունքում ընկերությանը վնաս է պատճառվում, ապա նա պետք է պատասխանատվություն կրի իր կողմից պատճառված վնասի համար: Դատարանի կողմից նշանակված լինելու պարագայում նա պետք է դիմի դատարան իրեն պարտականությունների կատարումից ազատելու խնդրանքով:

[2] Տե՛ս **Молотников А. Е.**, Ответственность в акционерных обществах, М., 2006, էջ 202:

նալով այդ հանգամանքը՝ պետք է լուծարման հանձնաժողովի անդամների համար սահմանել համապարտ պատասխանատվություն: Պատասխանատվության այդ տեսակը բաժնետիրական ընկերության կոլեգիալ, ընտրովի մարմինների համար սահմանված է եղել դեռևս «Բաժնետիրական ընկերությունների մասին» Խորհրդային Միության կենտրոնական գործադիր կոմիտեի 1927 թ. կանոնակարգով, որի 73-րդ հոդվածի 2-րդ կետով բաժնետիրական ընկերությունների բոլոր ընտրովի մարմինների համար սահմանված է եղել համապարտ պատասխանատվություն[1]: «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածում, որը վերաբերում է բաժնետիրական ընկերությունների լուծարման կարգին, հիմնականում թվարկվում են լուծարման հանձնաժողովի լիազորությունները: Այսպես, նշված հոդվածի 1-ին կետի համաձայն՝ լուծարման հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում ընկերության գործերի կառավարման լիազորությունները: Լուծարվող ընկերության անունից դատարանում հանդես է գալիս լուծարման հանձնաժողովը: Այսպիսով, լուծարման հանձնաժողովը լուծարման գործընթացում ստանձնում է բաժնետիրական ընկերության գործերի կառավարմանն ուղղված բոլոր լիազորությունները՝ լրացնելով ընկերության իրավունակության սահմանափակումները: Սակայն միևնույն ժամանակ պետք է նշել, որ տեսականորեն պարզ չէ լուծարման հանձնաժողովի կարգավիճակը. մի կողմից նա հանդես է գալիս ընկերության անունից, իսկ մյուս կողմից էլ ո՛չ Օրենսգիրքը, ո՛չ էլ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը հստակ նշում չեն պարունակում այն մասին, որ լուծարման հանձնաժողովը իրավաբանական անձի անունից հանդես է գալիս առանց լիազորագրի:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի նշված հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ լուծարման հանձնաժողովը http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական համացանցային կայքում հայտարարություն է զետեղում ընկերության լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի ու ժամկետների մասին: Այդ ժամկետը չի կարող պակաս լինել երկու ամսից՝ սկսած լուծարման հրապարակման պահից, որը համարվում է ընկերության լուծարման սկիզբ: Լուծարման հանձնաժողովի համար սահմանելով կոնկրետ լիազորություն՝ օրենքում չի նշվում այն հետևանքների մասին, որոնք վրա կհասնեն, եթե հայտարարության մեջ երկու ամսից պակաս ժամկետ նշվի: Նույն թերությունն առկա է նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՌԴ օրենքի 22-րդ հոդվածում, ինչն արդարացիորեն քննադատության է արժանացել մասնագիտական գրականության մեջ[2]: Պարզ է, որ նման իրավիճակներում պարտատերերն իրավունք ունեն պահանջելու, որ այդ ժամկետը հավասարեցվի օրենքում նշված նվազագույն երկամսյա ժամկետին, հակառակ դեպքում կարելի է պահանջել, որ ընկերության լուծարումն անվավեր ճանաչվի:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ լուծարման հանձնաժողովն իրականացնում է ընկերության գույքի

---

[1] Տե՛ս Положение об акционерных обществах (утв. Постановлением ЦИК СССР, СНК СССР от 17.08.1927), http://base.consultant.ru/cons/cgi/online.cgi?req=doc;base=ESU;n=6124 (վերջին այցելություն 28.01.2018):

[2] Տե՛ս **Телюкина М. В.**, Комментарий к Федеральному закону «Об акционерных обществах» (постатейный), WoltersKluwer, 2005, էջ 136:

վերագնահատումը, միջոցներ է ձեռնարկում պարտատերերի հայտնաբերման և դեբիտորական պարտքերի ստացման ուղղությամբ, ինչպես նաև տեղեկացնում է պարտատերերին ընկերության լուծարման մասին: Սրա հետ կապված նշենք, որ անշուշտ խոսքը լուծարման հանձնաժողովին հայտնի պարտատերերի մասին է, ըստ որում վերջիններս պետք է տեղեկացվեն՝ անկախ տարածված հայտարարությունից: Սակայն տարակարծությունների տեղիք կարող է առաջացնել այն դեպքը, երբ թեև առկա է պաշտոնական հայտարարություն, սակայն ընկերության հայտնի պարտատերերն առանձին գրավոր չեն ծանուցվել կամ էլ հակառակը. արդյո՞ք այս դեպքերը կարելի է դիտարկել որպես պատշաճ ծանուցում: Անշուշտ նման պայմաններում լուծարումն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելը կարող է անտրամաբանական լինել. մեր կարծիքով՝ այստեղ կարելի է խոսել միայն լուծարման հանձնաժողովի կողմից իր վրա դրված պարտականությունները ոչ պատշաճ իրականացնելու մասին: Գտնում ենք, որ օրենքում պետք է հստակ նշվի այն տեղեկատվությունը, որը պետք է ներառվի պարտատերերի ծանուցման մեջ, արդյոք այն պետք է պարունակի պաշտոնական հայտարարության մեջ առկա ողջ տեղեկատվությո՞ւնը, այդ թվում՝ պահանջների ներկայացման ժամկետների մասին, թե՞ պետք է բավարարել՝ միայն լուծարման մասին գրառում կատարելով:

Ինչ վերաբերում է պարտատերերի հայտնաբերմանն ուղղված միջոցներ ձեռնարկելուն, ապա այստեղ խոսքը պարտատերերի գտնվելու վայրի, նրանց պահանջների չափի ու բնույթի ճշգրտման մասին է:

Օրենքի քննարկվող հոդվածի 5-րդ կետով ևս անդրադարձ է կատարվում լուծարման հանձնաժողովի լիազորություններին, որտեղ նշվում է, որ պարտատերերի կողմից պահանջներ ներկայացնելու ժամկետն ավարտվելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է միջանկյալ լուծարման հաշվեկշիռ, որը տեղեկություններ է պարունակում լուծարվող ընկերության գույքի կազմի, պարտատերերի ներկայացրած պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների ներկայացման արդյունքների մասին: Մեր կարծքով, միջանկյալ լուծարման հաշվեկշռում պետք է արտացոլվեն ոչ միայն լուծարման հանձնաժողովի կողմից ընդունված պահանջները, այլև նրանք, որոնք պարտատերերի կողմից չեն ներկայացվել, սակայն ընկերությանը հայտնի են, և նրանք, որոնք ներկայացվել են սահմանված ժամկետի ավարտից հետո: Բացի այդ՝ պետք է ներառվեն նաև այն պահանջները, որոնք չեն ընդունվել լուծարման հանձանժողովի կողմից, և պարտատերերը բողոքարկել են այդ որոշումները դատական կարգով[1]:

«Բաժնետիրական ընկերությունների մասին» Գերմանիայի օրենքի 270-րդ պարագրաֆում նշվում է լուծարման հանձնաժողովի կողմից կազմվող բացման կամ նախնական հաշվեկշռի, տարեկան և գործերի ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների մասին: Մասնավորապես, այստեղ նշվում է, որ լուծարման հանձնաժողովը լուծարման գործընթացը սկսելուց առաջ պետք է կազմի հաշվեկշիռ և կից՝ բացատրական նամակ, իսկ յուրաքանչյուր տարվա ավարտից հետո՝ տարեկան հաշվետվություն և գործերի ընթացքի վերաբերյալ հաշվետվություն, եթե լուծարման գործընթացը տևում է մի քանի տարի: Նշված փաստաթղթերը ենթակա են

[1] Այս կապակցությամբ Գերմանիայի առևտրային օրենգրքի 301-րդ հոդվածը սահմանում է, որ եթե լուծարային հանձնաժողովին հայտնի որևէ պարտատեր չի ներկայացնում իր պահանջը, ապա նրան հասանելիք գումարը պետք է դեպոնացվի որևէ մարմնում, որն ունի նման իրավասություն:

հաստատման ընդհանուր ժողովի կողմից[1]: Ինչպես տեսնում ենք, այս հարցում Գերմանիայի օրենսդիրը առավել հետևողական է գտնվել, քանի որ ընկերության լուծարումը կարող է երկար ժամանակ տևել, նույնիսկ մի քանի տարի, և տարեկան հաշվետվություն ներկայացնելու պահանջը ընկերության ընդհանուր ժողովին հնարավորություն կտա մշտապես հետևել այդ մարմնի գործունեությանը:

Այսպիսով, ամփոփելով վերոշարադրվածը, գտնում ենք, որ անհրաժեշտ է օրենսդրական մակարդակով ամրագրել լուծարման հանձնաժողովի՝ իրավաբանական անձի հատուկ մարմին հանդիսանալու հանգամանքը, կարգավորել լուծարման հանձնաժողովի անդամների՝ որպես իրավաբանական անձի կառավարման մարմնի անդամի պասխանատվության խնդիրը, սահմանել լուծարման հանձնաժողովի անդամի փոփոխման կամ այդ հանձնաժողովի կազմի համալրման հնարավորություն, ինչպես նաև ներդնել լուծարման հանձնաժողովի հաշվետվողականության ավելի նոր մեթոդներ, եթե լուծարման գործընթացը տևում է մի քանի տարի, ինչը հնարավորություն կտա առավել ճշգրիտ պատկերացնել լուծարման հանձնաժողովի տեղն ու դերը, բարձրացնել նրա գործունեության արդյունավետությունը, ապահովել ընկերության պարտատերերի և փոքրամասնություն կազմող պարտատերերի իրավունքների պաշտպանությունը:

ПРАВОВАЯ СУЩНОСТЬ ЛИКВИДАЦИОННОЙ КОМИССИИ ХОЗЯЙСТВЕННЫХ ОБЩЕСТВ

Ашхен Согомонян
Преподаватель кафедры гражданского права ЕГУ

Проблема правового регулирования деятельности ликвидационной коммиссии представляет не только научный, но и практический интерес, так как в период ликвидации она становится органом управления юридического лица. Проблемы законодательства создают условия для различных нарушений и злоупотреблений со стороны ликвидационной комиссии (ликвидатора), в том числе нарушений прав кредиторов. В связи этим автор предложил варианты поправок законодательства чтобы деятельность ликвидационный комиссии стало более предсказуемым и контролируемым.

[1] Տե՛ս Закон об акционерных обществах Германии. Паралельные русский и немецкий тексты. Aktiengesetz. Paraller russischer und deutscher text, **Willfried Bergmann**, Wolters Kluwer Russia, 2009, էջ 298:

A LEGAL NATURE OF THE LIQUIDATION COMMISSION OF BUSINESS ENTITIES

Ashkhen Soghomonyan
Lecturer of the YSU Chair of Civil law

The problem of legal regulation of liquidation Commission activity is not only scientific, but also of practical interest, since in the process of liquidation it becomes the governing body of a legal entity. The problems of the legislation create conditions for various violations and abuses by the liquidation Commission (liquidator), including violations of creditors' rights. In this regard, the author proposed a number of options for amending the legislation so that the liquidation Commission's liquidity became more predictable and controlled.

Բանալի բառեր – *լուծարման հանձնաժողով, իրավական բնույթ, կառավարման մարմիններ, իրավաբանական անձ, լուծարման հանձնաժողովի իրավասություններ, լուծարման հանձնաժողովի կազմ, լուծարման հանձնաժողովի պատասխանատվություն*
Ключевые слова - *ликвидационная комиссия, правовая сущность, органы управления, юридическое лицо, полномочия ликвидационный комиссии, состав ликвидационной комиссии, ответственность ликвидационной коммисии.*
Key words - *liquidation committee, legal essence, management bodies, legal entity, powers of the liquidation committee, composition of the liquidation committee, responsibility of the liquidation committee.*